

Խմբագրական

Վտանգուած անկախութիւնը

30 տարի առաջ, հայոց անկախ պետականութեան վերընձիւղման ու վերականգնման գործընթացը համատեղ զսպանակուեցաւ Լեռնային Դարաբաղի հայութեան ինքնորոշման հիմնախնդրին հետ:

Միաժամանակ, չնորհիւ անժուրաց եւ ուխտապահ ազատամարտիկներու, պատմութեան էջերուն վրայ դարբնուեցաւ Արցախի անկախութիւնը:

Այսօր, Արցախեան պատերազմէն ետք, կացութիւնն ու պատկերը լրիւ փոխուած են: Խոցուած են հայոց արեւելից սահմանները, կիսախորտակուած վիճակի մէջ է Արցախի միջնաբերդը:

Անկախութիւնը կ'իմաստազրկուի, երբ օրն ի բուն սպառնալիքի տակ են պետական սահմաններդ, երբ տարածքներու ամբողջականութիւնդ թշնամիի ամենօրեայ քմահաճոյքին ենթակայ է:

2020 թուականի Արցախեան պատերազմի ընթացքին եւ անոր յաջորդող արարին ի յայտ եկած քաղաքական զարգացումներէն ետք՝ առկայ են բոլոր փաստերը, որ թուրք-ատրպէյճանական յարձակողապաշտութիւնը կը նպատակադէի ի սպառ անէացնել հայրենի մեր գոյգ պետութիւնները: Կը շարունակուի հայատեսացութեան քարոզարշաւը ու կասկածէ դուրս է, որ մօտ ապագային կանգ առնէ թուրք-ատրպէյճանական հակահայ գործընթացքը, որ կը միտի կազմաքանդել մեր պետականութիւնը:

Հակամարտութիւնը չէ աւարտած: Զիջումի ու մերձեցման քաղաքականութիւն մշակող ներկայ իշխանութիւնները պէտք է դիտակցին, որ կորստեան մատնուած ճակատամարտէն ետք, վերակազմակերպուելու եւ ապագայ առճակատման պատրաստուելու ժամանակն է:

Ի՞նչ կը գիջինք: Ի՞նչ պատճառով սահմանները կը վերագծուին: Ինչո՞ւ պատմութիւնը կ'աղաւաղուի: Ինչո՞ւ խաղաղութեան ու բարգաւաճման դիմաց՝ «գիջում»ի գաղափարը կը սերմանուի: Այս հարցումներուն պատասխանը չունին ազգը անձնատուութեան առաջնորդած այսօրուան իշխանութիւնները:

Քանակական վերլուծութիւնը ի՞նչ է կորուստին: Հաշուառա՞ծ են իմքալլականները: Եւ երբ կը խօսինք այդ մասին, նաեւ բարոյականութեան մասին,որ այսօր եղծուած է իր պարունակէն:

Հայկական հարցի լուծման մէկ բաղադրիչը կազմող Արցախի անկախութեան ճանաչման գործընթացը ծանր հարուած ստացաւ Հայաստանի ներկայ իշխանութիւններու անձնատուողական քաղաքական վարքագծի արդիւնք՝ 2020 թուականի Նոյեմբեր 9–ի կորստաբեր համաձայնագրով:

Հողի եւ աշխարհագրական տարածքի կորուստ ունինք եւ այս ծանր կորուստին ի տես, առաջին հերթին, այսօրուան ընդդիմութեան դրօշակիրը հանդիսացող Հ.Յ.Դաշնակցութիւնը պատնէշի վրայ է եւ աշխարհ-

ՀՅԴ Բիւրոյի ուղերձը Անկախութեան օրուայ առթիւ

Սիրելի՛ հայրենակիցներ

Մեր նորանկախ պետականութեան 30–րդ տարեդարձը ստիպուած ենք դիմաւորելու ծանր պայմաններու մէջ: Վերջին պատերազմին վէրքերը խորունկ են, կորուստները՝ ցաւալիօրէն շատ: Վտանգուած է աշխարհի քաղաքական քարտէսի վրայ մեր ինքնիշխան գոյութեան իրաւունքը: Առկայ մարտահրավերները եւ արտաքին սպառնալիքները դիմադրաւելու անհրաժեշտ նախապայմանը ներքին ամրութիւնն է: Առաջին հերթին խաթարուած ամրութիւնը վերականգնելու հարց ունինք:

Ցաւօք, խորհրդարանական արտահերթ ընտրութիւնները չնպաստեցին այդ հարցին լուծման: Ըգնաժամը ոչ միայն չէ յաղթահարուած, այլեւ կը հակի առաւել խորացման: Խարդաւանքներու, վարչա–իշխանական լծակներու օգտագործմամբ ձեռք բերուած քուէները իշխանութիւնը ընկալած է որպէս իր ձախողութիւններուն, ապաշնորհ կառավարման եւ կործանարար քաղաքականութեան մեղքերու թողութիւն: Շարունակ խօսելով ժողովուրդին անունով եւ պահոււրտելով անոր ետեւ, իշխող վարչախումբը այդ նոյն ժողովուրդը տարած է ու կը շարունակէ տանիլ պարտութեան ու հայրենազրկման: Ծառելով ժողովրդավարութենէ, մարդու իրաւունքներէ, ազատութիւններէ ու քաղաքական հանդուրժողականութենէ, իշխանութիւնները կը դրսեւորեն բռնապետական բացայայտ հակումներ, կ'ոտնակոխեն օրէնքն ու քաղաքացիին իրաւունքները, զբաղած են թշնամանք սերմանելով ու ատելութիւն քարոզելով:

Սթափելու, անցած ճանապարհը արժեւորելու, վերագնահատումներ կատարելու, յստակ ազգային օրակարգ եւ ծրագիր որդեգրելու ու հետեւողականօրէն գործադրելու հրամայականի առջեւ ենք:

Շնորհաւորելով մեր ժողովուրդը՝ անկախութեան տօնին առիթով, Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը, իբրեւ համահայկական կազմակերպութիւն, կը վերահաստատէ իր յանձնառութիւնը՝ շարունակելու պայքարը թէ՛ ներքին, թէ՛ արտաքին ճակատներու վրայ, ի շահ ազգային, ուժեղ պետականութեան եւ Արցախի ինքնորոշման ու ազատութեան: Խորապէս համոզուած ենք, որ անկախ պետականութիւնը բացարձակ արժէք է, ինչպէս նաեւ՝ ազգի բնականոն զարգացման նախապայման: Իշխանութիւնները անցողիկ, գնայուն են, պետականութեան տէրը բոլորս ենք ու բոլորս անելիք ունինք: Հայաստանի Հանրապետութիւնը աշխարհասփիւռ հայութեան հայրենիքն է, առ այդ՝ հայոց անկախ պետականութեան հզօրացումն ու ամրապնդումը համայն հայութեան գերխնդիրն է: Արեամբ, գոհողութիւններով ու քրտինքով կերտուած մեր անկախ պետականութիւնը այսօր աւելի քան երբեք մեր բոլորին հոգածութեան ու նուիրումին կարիքն ունի: Մեզի պարտադրուող փորձութիւնները կրնանք եւ պէ՛տք է յաղթահարենք:

ՀՅԴ Բիւրօ
21 Սեպտեմբեր 2021

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԹԵՄԱԿԱԼ ԵՐԵՔ ԱՌԱՋԵՈՐԴԵՐՈՒ ԿՈՉԸ ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ ԶՕՐԱԿՑՈՒԹԵԱՆ Ի ԽՆԴԻՐ

Հիւսիսային Ամերիկայի երեք թեմերու Առաջնորդները՝ Գերաշնորհ Տ. Անուշաւան Արքեպիսկոպոս Դանիէլեան (Արեւելեան Թեմ), Գերաշնորհ Տ. Բաբգէն Արքեպիսկոպոս Չարեան (Գանատայի Հայոց Թեմ) եւ Գերաշնորհ Տ. Թորգոմ Եպիսկոպոս Տօնոյեան (Արեւմտեան Թեմ), կը հրաւիրեն իրենց համայնքի գաւակները, միահամուռ ջանքերով շարունակելու Լիբանանի հայութեան ի նպաստ օժանդակութեանց արշաւը:

Ի հետեւումն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ հայրապետի կոչին, հարկաւոր է նոր թափ տալ համայնական ջանքերուն, համօրէն սատար հանդիսանալու սփիւռքի սիրտն ու ոգին հանդիսացող Լիբանանահայութեան, որ տասնամեակներ շարունակ կենսատու աւիւն ջամբեց մեր բոլոր գաղութներուն:

Առ այդ, երեք Առաջնորդները յանուն Ազգային Իշխանութեանց իրենց պատրաստակամութիւնն ու անվերապահ զօրակցութիւնը յայտնելով լիբանանահայութեան վերականգնման համազգային ճիգերուն, կը յորդորեն Հիւսիսային Ամերիկայի մեր համայնքի բոլոր գաւակները, որ միասնակամութեամբ եւ առաւել յանձնառութեամբ, ինչպէս անցեալին, այսօր եւս, գործնական քայլերով՝ բարոյապէս ու նիւթապէս նեցուկ կանգնին, եւ յոյսի շողերով լուսաւորեն Լիբանանահայ եղբայրներուն ու քոյրերուն, մանուկին ու տարեցին մթազնած հոգիները, յաղթահարելու ներկայի յամեցող աննկարագրելի տագնապը:

Գերաշնորհ Տ. Անուշաւան Արքեպիսկոպոս Դանիէլեան
Գերաշնորհ Տ. Բաբգէն Արքեպիսկոպոս Չարեան
Գերաշնորհ Տ. Թորգոմ Եպիսկոպոս Տօնոյեան

Վտանգուած... Ծար. էջ 5

YES

— All-New —
CIVIC
— SEDAN —

BOOK YOUR
TEST DRIVE TODAY!

TRO BACHEKJIAN
MIKE TOROSSIAN
KEVORK ASADOURIAN

HONDA
GABRIEL

HONDA

7000, boul. Henri-Bourassa Est,
Montréal-Nord, QC H1G 6C4
☎ : 514 327-7777



ADONIS



NOS MAGASINS

2001 Sauvé O,
Montréal, QC H4N 3L6
(514) 382-8606

4601 boul.Des Sources,
Montréal, QC H8Y 3C5
(514) 685-5050

8880 boul. Leduc,
Brossard, QC J4Y 0G4
(450) 656-9595

2425 boul.Curé Labelle,
Laval, QC H7V 1R3
(450) 978-2333

225 Rue Peel,
Montréal, QC H3C 2G6
(514) 905-6499

2173 St-Cathrine O,
Montréal, QC H3H 1M9
(514) 933-4747

3100 boul. Thimens,
Montréal, QC H4R 0C9
(450) 904-6789

2655 Ave. Des Aristocrates,
Laval, QC H7E 0H3
(450) 665-8801

7250 boul.Des Roseaies,
Anjou, QC H1M 2T5
(514) 493-6667

1240 Ave Eglinton O,
Mississauga, ON L5V 1N3
(905) 363-0707

1055 St-Laurent boul,
Ottawa, ON K1K 3B1
(613) 778-8883

920 boul.Maloney O,
Gatineau, QC J8T 3R6
(819) 317-1737

Suivez-nous !



www.groupeadonis.ca

20 Ashtonbee. Road,
Scarborough, ON M1L 4R5
(416) 642-1515

2561 Stanfield Rd,
Mississauga, ON L4Y 1R6
(365) 207-0200

1700 Rue Bouvier
Québec, QC G2K 1N8
(581) 890-9994

Այնճարը Համահայկական Արժեք Է. Եւ Անոր Հայեցի Դիմագիծի Պահպանումը՝ Առաջնահերթություն

Բովանդակ հայութեան եւ Հայաստանի, ինչպէս նաեւ լիբանանահայ համայնքի ապրած ճակատագրորոշ այս փուլին, Մուսա լեռան 106-ամեակի եւ Այնճարի հիմնադրութեան 82-ամեակի նշումը ժամանակակից խորիմաստ նոր պատգամներով եւ մտածումներով կը ներկայանայ մեզի:

Մուսա լեռան ժողովուրդին ցուցաբերած համաժողովրդային դիմադրութիւնը, կերտած հերոսապատումը եւ այնճարահայութեան լինելու ու արարելու կամքը, հայոց պատմութեան բոլոր փուլերուն եւ յատկապէս ներկայ ժամանակներուն կը պահեն իրենց պատմադրոշմ վեհ ու նշանակալից իմաստն ու այժմէականութիւնը:

Համահայկական մեր ընդհանուր երթին մէջ Մուսա լեռ եւ անոր բնական շարունակութիւնը հանդիսացող Այնճարը միշտ ալ իրենց գլխադիր ներկան արձանագրելով ու հայ կեանքին մէջ խոր արմատներ ընդարձակելով յաջողած են հայութեան պայքարին եւ Հայաստանի, Արցախի ու Հայ դատի ծառայութեան համար գտնուիլ պատնէշի առաջին դիրքերուն վրայ: Արցախեան 44-օրեայ պատերազմը այս տարեշրջանին դարձաւ մնայուն ու տիրական ներկայութիւն այնճարահայութեան մօտ, այդ պայքարին Այնճար նուիրաբերեց իր զաւակներէն՝ հայ մշակոյթի ու դպրութեան սպասարկող, ազնիւ հայորդի Գէորգ Հաճեանը, որուն նահատակութիւնը ցնցեց ամբողջ հայաւանը:

Լիբանանի ապրած ընկերային-տնտեսական ու առողջապահական

ճգնաժամը Այնճարի ու այնճարահայութեան համար պիտի դառնար համընդհանուր զօրաշարժ: Գիւղի ՀՅԴ «Կարմիր լեռ» կոմիտէն, քաղաքապետութիւնը, յարանուանութիւնները եւ ուղեկից կազմակերպութիւնները միացեալ ու համադրեալ ճիգով դիմակալեցին ու կը շարունակեն կանխարգիլել գիւղին սպառնացող բոլոր վտանգներն ու դժուարութիւնները: Արտասահմանի այնճարահայերուն զօրակցութիւնը պիտի չուշանար եւ համաայնճարեան նուիրահաւաքով անոնք պիտի գային զօրավիգ կանգնելու իրենց հայրենակիցներուն, քոյրերուն եւ եղբայրներուն:

Այս բոլորը անշուշտ զարմանալի պէտք է թուի բոլորիս համար, որովհետեւ Այնճարի նուաճած կենսափորձը հարուստ է: Հայաւանի գոյութիւնը ամէն գնով անխափան պահելու վճռակամութիւնը այնճարցիին համար դարձած է կեանքի նշանաբան ու գոյութեան իմաստ:

Մեր կեանքի ապրած այսօրուան խառնաշփոթ իրավիճակներուն մէջ այնճարահայութիւնը բնականաբար կը դիմադրաւ հակայական մարտահրաւէրներ: Տնտեսական գահավէժ ընթացքին պատճառով գիւղացին դժուարութեան դիմաց կը կանգնի, բերքահաւաքը այսօր դժբախտաբար դարձած է մտահոգիչ եւ այնճարցիին իր թափած քրտինքին արդիւնքը չի կրնար քաղել: Յառաջիկայ փուլը բնականաբար կը մտահոգէ բոլորը անխտիր՝ նկատի ունենալով եկամուտներու աննախընթաց սահմանափակումը եւ անշուշտ յառաջիկայ տարուան համար հողի մշակման ու ցանքի խիստ եւ ծանր

պարտաւորութիւնները:

Այս երեւոյթները սակայն ոչ մէկ ձեւով կրնան դառնալ պատճառ ու պատրուակ այնճարահայութեան մօտ ստեղծելու յուսաբեկման եւ անձնատուական տրամադրութիւն ու հոգեվիճակ: Անապատը դրախտավայրի վերածած եւ այսօր Լիբանանի մէջ իր իւրայատուկ տեղն ու դերակատարութիւնը ունեցող այս հայաւանը, վստահաբար պիտի յաջողի չըջանցել նաեւ այս փուլը: Մալարիան գիւղի հիմնադրութեան օրերուն դարձաւ հաւաքական չարիք, սակայն չկասեցուց այնճարահայութեան երթը: Մեր օրերուն, «Քորոնա» ժահրի համավարակը իր կարգին դարձաւ պատուհաս գիւղի բնակչութեան համար, սակայն շնորհիւ գիւղի ղեկավարութեան զգաստ ու յանձնառու մօտեցումին, կարելի եղաւ չըջանցել նաեւ այդ չարիքը: Գիւղի անվտանգութեան ու ապահովութեան սպառնացող բոլոր հարուածներուն դիմաց այնճարցիին մնաց իր կուրծքը լայնօրէն պարզած ու չարտօնեց որեւէ թափանցում կամ գիւղացիի արժանապատուութեան ոտնակոխում: Այսօր նաեւ գիւղացին այդ անվտանգութեան ու ապահովութեան անկեղծ զինուորն է:

Այս առիթով սակայն անհրաժեշտ է անդրադառնալ այդ անվտանգութեան ու ապահովութեան ահագանգ հանդիսացող հողավաճառքի թունաւոր երեւոյթին. մանաւանդ ներկայ փուլին անպատասխանատու ու պատեհապաշտ անհատներու կողմէ ճգնաժամը պատրուակ ծառայեցնելով կը դիմուի ան-

պարկեշտ ու վատ նախաձեռնութիւններու: Անոնք այսպէս կոչուած միջնորդի կամ զանազան նենգ ու ստախոս վարքագիծերու որդեգրումով, շինծու պատճառաբանութիւններով, օտարներու հողավաճառքի անընդունելի գործընթացը կը փորձեն նուիրականացնել՝ յագուրդ տալու համար իրենց անհատական շահերուն, ոտնակոխելով գիւղի պատմութիւնն ու արժանապատուութիւնը եւ իրենց ազգային գիտակցութիւնը վաճառքի հանած կը փորձեն սառնասրտօրէն նաեւ վտանգել գիւղին հայկականութիւնը:

Մուսա լեռան հերոսամարտի եւ Այնճարի հիմնադրութեան տարեդարձներու նշումին առիթով, մեծագոյն մարտահրաւէրը, որ կը դրուի մեր դիմաց, Այնճար հայաւանի հայկականութեան անաղարտ պահպանումն է: Անշուշտ այս մարտահրաւէրը պէտք է վերածել համազգային ռազմավարութեան եւ համահայկական ճիգով փորձել պատմական այս չարիքը միանգամընդմիջոյ հեռացնել գիւղի երկնակամարին վրայէն: Եթէ իսկապէս կը հաւատանք ու կ'ըմբռնենք, որ Այնճարը համահայկական արժէք է, հետեւաբար անոր գոյութեան պահպանումը պէտք է արժանանայ համազգային զօրակցութեան: Աշխատանք, որուն հիմնական զինուորագրեալը պէտք է ըլլայ գիւղի եւ արտասահմանի մէջ ապրող ամբողջ այնճարահայութիւնը:

ՅԱԿՈԲ ՀԱԽԱԹԵԱՆ

ԳՈՐԾԻ ԱՌԻԹ
Դերձակութեան “Arthur Montreal”
հաստատութիւնը կարիքը ունի դերձակներու,
կարողներու եւ ձեռողներու: Հետաքրքրուողները
կրնան հեռաձայնել 514-843-0522 թիւին:
Վարժանք արհեստի

TAILORS & SHIRT MAKERS NEEDED
“Arthur Montreal” Bespoke Tailors & Shirt Makers
are looking for experienced seamstress, cutters
and tailors. If interested, please call 514-843-0522.
Training will be provided.





Ձեր բոլոր ճամբորդական
Կարիքներուն համար հեռաձայնել՝
(514) 284-7676

ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ...

**ԼԱԻՍԳՈՅՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ
ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԳԻՆԵՐ**

***Նոր Հասցէ՝** PERMIS DE QUÉBEC
Voyages Haig Travel
4150 Rue Sherbrooke Ouest suite 404A, Westmount, QC H3Z 1C2

Tel: + 1 514-284-7676
Email info@haigtravel.ca

Թաղեւոս Յակոբեան

**ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՔԱՂԱՔՆԵՐԸ**



ՆՈՐԻԶՈՆ

«Հորիզոն»-ի հրատարակութեամբ լոյս տեսաւ Թաղեւոս Յակոբեանի «Պատմական Հայաստանի քաղաքները» աշխատութեան արեւմտահայերէնի վերածուած հատորը, մեկենասութեամբ Մոնթրէալի Հայ կեդրոնի Տարեցներու միութեան:

Գիրքը նուիրուած է Հայոց ցեղասպանութեան նահատակներու յիշատակին:

Գիրքը ստանալու համար դիմել -
Մոնթրէալ՝ «Հորիզոն»ի խմբագրատուն, 514-332-3757
Թորոնթօ, Համազգայինի գրատարած, Հայ Կեդրոն (Կիրակի Օրեր)

Սակ՝ \$20

Ի՞նչ է Հայաստանի Իրավիճակը. Պատերազմը Դադրա՞ծ է. Վերսկսա՞ծ, Հսկումի՞ նախօրեա՞ն

«Ամէն մարդ կրնայ սխալներ գործել եւ զանոնք վերագրել ուրիշի. այս փաղափակնութիւն ընել է»:
ԺՈՐԺ ՔԼԵՄԱՆՍՕ
Ֆրանսացի փաղափական դէմք, 1841-192

Ամէն օր հայ-ազրպէյճանական սահմանին վրայ կրակոցներ կան՝ հակառակ երաշխաւորուած զինադադարին, ազրպէյճանցի զինուորները սահման կը հատեն, մարդ կ'առեւանգեն, անասուն կը գողնան, հայ մարդիկ կը մեռնին, ճամբաներէն անցնողներու վրայ կրակ կը բանան: Թէեւ կացութեան մասին ճշգրիտ տեղեկութիւններ կը պակսին, ոչ ոք յստակութեամբ կրնայ ըսել, թէ ո՞ւր ի՛նչ կը պատահի, ո՞ւր ի՛նչ կրնայ պատահիլ այսօր կամ վաղը: Ի՞նչ նպատակ կը հետապնդեն ազրպէյճանցի սանձարձակ գործող բանակայինները:

Հայաստան պարտուած է թուրք-ազրպէյճանական զինուորական ուժին կողմէ եւ կը գտնուի փակուղիի մէջ: Կացութեան յստակ պատկերացումը չունի ժողովուրդը: Լրատուական թափանցիկութիւն չկայ: Բայց կարծէք կեանքը վերադառած է իր բնականոն ընթացքը: Այն քիչը, որ կ'իմանանք, այն է, թէ Հայաստանի սահմաններուն վրայ անտիրութիւն կայ, բանակը կարծէք ի վիճակի չէ կացութիւնը հակալէռելու, եւ երկրի ապահովութիւնը պահելու եւ պաշտպանելու համար կը սպասուի արտաքին ուժերու բարեացակամ միջամտութեան:

Ծաւալած եւ ծաւալող թեր ու դէմ անվերջանալի վերլուծումները, նախատեսութիւնները, մեկնաբանութիւնները այլեւս ոչինչ կը լուսաբանեն եւ կը մթագնեն քաղաքական հորիզոնը: Հետզհետէ կը շեշտուին անտիրութիւնը եւ չփոթները: Հակասական արտայայտութիւններ կը շեշտեն անապահովութեան եւ անորոշութեան զգացումը:

Երկրի կացութիւնը հասկնալու համար իշխանութիւնները յստակ խօսք պէտք է ըսեն, ճշգրիտ տեղեկութիւններ տան: Պէտք է գիտնալ, թէ ինչպէ՞ս պիտի դիմակայուին նոր նախադարձակումը եւ պատերազմը, որոնց մասին կը խօսուի, եթէ սահմաններու վրայ տեղի ունեցող անընդունելի միջադէպերը շարունակուին:

Քննիչ մասնագիտական յանձնախումբ պէտք է ուսումնասիրէ 44-օրեայ պատերազմի ընթացքի իրադարձութիւնները եւ արդիւնքները, արձանագրէ մեր անփառունակ պարտութեան իսկական պատճառները, ճշգէ քաղաքական ու ռազմական սխալները եւ պատասխանատուութիւնները, որմէ ետք միայն կարելի է վստահիլ իշխանութիւններուն, որոնք ալ ըլլան իշխանութիւնները, եւ՝ վերականգնել ժողովուրդին յոյսը, առաջը առնել պարտութեան հետեւող լքումներու, վերջ տալ փոխադարձ ամբաստանութիւններու եւ մանաւանդ յուսալքման հետեւանք՝ նախատեսուող զանգուածային արտագաղթի, որուն հետեւանքները ճակատագրական կ'ըլլան մեր անկախութեան եւ պետականութեան

պահպանման համար:

Իշխանութիւնները կ'ըսեն, որ Ազրպէյճանը կ'ուզէ պատերազմ հրահրել, պատերազմը վերսկսիլ: Ազրպէյճան արդէն Հայաստանի տարածքներուն նկատմամբ նուաճողական յայտարարութիւններ կ'ընէ անգսպելի դարձած յաւակնութիւններով, մինչեւ՝ էրիվան: Պարտուած իշխանութիւններու պատասխանը այն է, որ տարածաշրջանին մէջ խաղաղութիւն պահպանուի: Ինչպէ՞ս: Հայաստանի տարածքային ամբողջականութեան երաշխաւոր եւ դաշնակից Ռուսիան կը տեսնէ եւ կը լսէ, բայց կը լռէ: Հայաստան խաղաղութիւն կ'ուզէ պահպանել: Բնական է, որ պարտուած իշխանութիւն եւ բանակ չեն կրնար մտածել պատերազմի մասին, չեն ունենար ժողովուրդին նեցուկը:

Այս իրադրութեան մէջ նոյն իշխանութեան վերարտադրութիւնը, ինչպէս կ'ըսեն, նախաձեռնութիւններու առջեւ բաց դուռ չի ձգեր: Հանրային կարծիքը դեռ կը գտնուի անորոշութեան մէջ 9 նոյեմբեր 2020-ի յայտարարութեան ամբողջական բովանդակութեան հարցով:

Քաղաքական մեծ վերլուծաբան ըլլալու կարիք չկայ կացութեան բարդութեան մասին մտածելու համար: Խորհրդային Միութիւնը չկայ, բայց Արեւմուտք-Արեւելք մրցակցութիւն-հակամարտութիւնը նոր տարազ հագած՝ կը շարունակուի: «Խորհրդային-Ազատ Աշխարհ»-ի զինեալ սահմանագիծ էր Հայաստանը: Հիմա այդ սահմանը «Արեւմուտք-Արեւելք» է: Ռուսական ազդեցութեան դօտին դէմ կռուեցան Թուրքիան եւ Ազրպէյճանը, նաեւ՝ Իսրայէլը, իսկ Եւրոմիութիւնը եւ Ամերիկան, հետեւելով անցեալի աւանդութեան, ո՛չ քաղաքական եւ ո՛չ զինուորական օժանդակութիւն բերին Հայաստանի, գոհացած էին եւ կը գոհանան բարեսիրութեամբ, կրնան մատակարարել դեղ եւ սնունդ, յատկացումներ ընել՝ քանդուած տուներ եւ ճամբաներ վերանորոգելու: Կացութիւնը անցեալէն կը տարբերի անով, որ որբախնամի կարիք չէ զգացուած մինչեւ հիմա: Որպէս գոհունակ նպաստընկալ՝ կրնանք աղմուկով ծափահարել:

Իսկ Ռուսիոյ դիրքորոշումը կարծէք դատարարակէական է, պատասխան է Հայաստանի մէջ բացայայտ կերպով եւ աղմկարարութեամբ զբսեւրուած հակառուսական յայտարարութիւններու եւ «արեւմտասիրական» պատեհապաշտական խարխափումներու: Անցեալի եւ ներկայի փորձերը բաւարար չափով ուսուցողական չեն եղած, որպէսզի, ներսը եւ դուրսը, հասկցած ըլլանք, որ Հայաստանը Արեւմուտք չէ, Արեւելք է, որքան ալ ոմանց այդ հաճելի թուի Արեւմուտք ըլլալ:

Արեւմուտքը, նեղմտութեամբ, առանց նկատի առնելու համաշխարհային քաղաքական-գաղափարական նոր դասաւորումները եւ նոր ուժերը, ուրուագծուող քաղաքակրթական-կրօնական գալիք հակադրութիւնները, կը շարունակէ, մեկնելով իր դասական հինցած քաղաքական վերլուծումէն, Ռուսիան տեսնել որպէս մրցակից-թշնամի, ինչ որ յառաջիկայ տասնամեակներուն պիտի ըլլայ ժամանակավրէպ քաղաքականութիւն: Անդրադարձը ցաւոտ կրնայ ըլլալ: Անհեռատեսութիւն է Հայաստանի արեւմտականացման ցանկութիւնը, ինչպէս նաեւ՝ ռուսական զինուորական ներկայութեան Հայաստանէն հեռացումը: Քաղաքական ողջմտութիւնը պէտք է պարզ հաստատում մը ընէ. եթէ ռուսական զինուորական ուժը հեռանայ Հայաստանէն, ան պիտի չփոխարինուի ո՛չ Ֆրանսական եւ ո՛չ ալ ամերիկեան ուժով: Մարգարէ ըլլալու կարիք չկայ. այդ ուժը պիտի փոխարինուի թրքականով՝ ճամբայ հարթելու համար այլեւս անթաքոյց դարձած համաթրքական կայսրութիւն ստեղծելու երազին, ինչպէս անցեալին ըսուած էր՝ «Եգէականէն մինչեւ Չինաստան»: Նաեւ՝ Չինաստան:

Արեւմտականացման խաղը տնօրինողները, բացարձակապէս չեն հետաքրքրուած ո՛չ Հայաստանի տարածքային ամբողջականութեամբ, ո՛չ Արցախով, արդէն կատարուած իրողութիւն է իրենց համար Արեւմտահայաստանի կորուստը, հիմա կատարուած իրողու-

թիւն է Արցախի երեք չորրորդին կորուստը: Այդ կորուստները իրենց չեն վերաբերիր, հետեւաբար չեն մտահոգուիր:

Հայ ժողովուրդ, հայու ինքնութիւն, հայու պետութիւն, հայու մշակոյթ՝ մեծերու քաղաքական ճատրակի տախտակին վրայ տեղ չունին:

Հայ ժողովուրդը, ներսը՝ Հայաստանի մէջ, եւ դուրսը՝ սփիւռք, խարխափող եւ իր հայրենահանումը մոռցող, ողջախոհութեամբ պէտք է գիտնան, թէ ո՞ւր են իրենց ազգային շահերը, գիտնան, թէ ո՞ւր կ'երթան եւ ո՞ւր պէտք չէ երթալ:

Այս ընտրանքը ո՛չ անհատական է, ո՛չ եսական, ո՛չ սնափառական, ո՛չ տեղական, ո՛չ ընկերատնտեսական. ան պատմութեան առջեւ լինել-չլինելու պատասխանատուութիւն է, զոր պէտք է ստանձնել՝ հակասիրողական (anti-amateurisme) մօտեցումով, պատմաքաղաքական բարձրորակ գիտակցութեամբ, ողջախոհութեամբ, յանդգնութեամբ եւ անձին օրինակի յանձնառութեամբ:

Այսինքն՝ չսպասել, որ երկինքէն մանանայ տեղայ:

Եւ հեռանալ Ժորժ Քլեմանսոյի դիպուկ արտայայտութեամբ բանաձեւուած քաղաքական որձեւէզ արդարացման փորձերէ. «Ամէն մարդ կրնայ սխալներ գործել եւ զանոնք վերագրել ուրիշի. այս քաղաքականութիւն ընել է»:

Յ. ՊԱԼԵԱՆ

Կը փնտրենք աշխատասէր և սորվելու պատրաստակամ ոգի ունեցող Թեկնաճուներ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

ԼԻԱԺԱՄ ԱՇԽԱՏԱՆՔ, ՇԱԲԱԹԱԿԱՆ 40 ԺԱՄ Առաւօտեան ժամ 7-էն 3:30 և կամ կէսօրէ ետք 3:30 – Էն գիշերուան 12:00	
Ընդհանուր աշխատակից՝	ցերեկ \$17.50/ժ երեկոյեան \$19.00/ժ
CNC մեքենայ բանեցնող՝	ցերեկ \$18.50/ժ երեկոյեան \$20.00/ժ
Կազմող՝	ցերեկ \$19.75/ժ երեկոյեան \$21.25/ժ
Ներկարար՝	ցերեկ \$20.25/ժ երեկոյեան \$21.75/ժ
Ներկող՝	ցերեկ \$22.25/ժ երեկոյեան \$24.00/ժ

ԱՐԱԽԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Աշխատանքի պատրաստութիւնը՝ ձեր զիտցած լեզուով Խմբային ապահովագրութեան հնարաւորութիւն Ունակութիւններու զարգացման հնարաւորութիւն Խմբային եւ ընկերային զանազան միջոցառումներ Ինքնաշարժի ձրի կալանատեղի հնարաւորութիւն

ԱՍՄԻՋԱՊԷՍ ԴԻՄԵՑԷՔ՝

emplois@seatply.com

SEATPLY

wood chair components

www.horizonweekly.ca

CONNECT WITH US:

facebook.com/pages/horizonweekly

@horizonweekly

horizonweekly

YouTube – Horizon Weekly TV

Opposition rejects holiday bonuses

YEREVAN—Opposition lawmakers said on September 17 that they will not accept hefty holiday bonuses allocated to all members and staffers of Armenia’s parliament by speaker Alen Simonyan.

Simonian decided to reward them on the occasion of the country’s Independence Day marked on September 21. The one-off payments will be equivalent to 75 percent of the parliament deputies’ monthly wages, meaning that each of them will get at least 380,000 drams (\$770).

Both opposition alliances represented in the National Assembly criticized the decision as profligate and unethical, saying that the Armenian authorities are continuing to neglect the country’s socioeconomic problems aggravated by last year’s war in Nagorno-Karabagh.

“At a time when the country has severe socioeconomic problems and more than 10,000 wounded and disabled persons, public officials, including National Assembly deputies, are continuing to get bonuses,” said Ishkhan Saghatelyan, a deputy parliament speaker and senior member of the opposition Hayastan bloc.

“In line with our campaign platform and statements, we will not benefit from these sums,” Saghatelyan told reporters. “We will either return them to the

state budget or use them for implementing a [charity] project in of Armenia’s border regions.”

The opposition Pativ Unem bloc likewise said that all of its seven parliamentarians will donate their bonuses to victims of the Karabagh war and their families. In a statement, it said accepting the money means “living a normal life as if nothing happened” to Armenia and Karabagh.

The parliamentary group of Prime Minister Nikol Pashinyan’s Civil Contract party did not officially react to the opposition criticism. One of its members, Hovik Aghazaryan, praised his opposition colleagues for planning to use their bonuses for charitable purposes. But Aghazaryan made clear that he himself will take the extra cash. Another pro-government parliamentarian, Heriknaz Tigranyan, said there is nothing wrong with accepting what she described as a “symbolic reward” worth roughly twice the amount of the average monthly wage in Armenia.

Government officials said that all Armenian civil servants will receive Independence Day bonuses.

Armenia’s previous parliament also controlled by Pashinyan’s party faced similar criticism earlier this year when it decided to add 250,000 drams to its deputies’ monthly wages worth at least 473,000 drams.

(RFE/RL)

Pashinyan poised to get ‘preferential healthcare’

YEREVAN—Armenia’s National Security Service (NSS) has drafted legislation that would require the government to provide “personal doctors” to Prime Minister Nikol Pashinyan, parliament speaker Alen Simonyan and members of their families.

An Armenian law on “individuals subject to special state protection” has until now guaranteed such privileged healthcare only for the president of the republic and his family. The NSS wants to extend the government-funded privilege to the two other officials.

The security agency circulated a relevant bill days after Pashinyan’s government reportedly stopped paying for medical services provided to ordinary citizens by public and private hospitals. According to news reports, the Armenian Ministry of Health attributed the drastic measure to a lack of public funds resulting from an increased number of people seeking free surgeries and other essential treatment.

Opposition politicians and other government critics denounced the NSS bill, saying that it makes mockery of Pashinyan’s past promises to establish social justice and equality in the country.

“Three years ago Nikol Pashinyan was saying that there are three million prime ministers in Armenia,” said Anna

Grigoryan, a parliament deputy from the opposition Hayastan bloc. “But that is still not manifested in any way. The prime minister has extensive powers now, and you can see how just big his security detail is.”

Grigoryan told RFE/RL’s Armenian service that the extra privilege sought for him is all the more unethical now that Armenia is continuing to grapple with serious national security challenges after last year’s war in Nagorno-Karabagh.

Hayk Mamijanyan, another opposition lawmaker representing the opposition Pativ Unem bloc, speculated that the NSS bill may be aimed at deflecting public attention from those challenges.

He said Pashinyan and Simonian “must have the morality and the will to renounce that privilege” and redirect government funding required for it to low-income Armenians in urgent need of medical aid.

Yerevan residents randomly interviewed by RFE/RL’s Armenian Service echoed the opposition criticism.

“If ordinary people cannot be treated at the state’s expense why should they have such privileges?” said one woman. “Are they better than ordinary people?”

“This was done covertly in the past. Now they want to legalize that,” complained a man.

(RFE/RL)

‘It was torturous’: Armenian POWs testify to torture in Azerbaijani captivity

YEREVAN—A new report has revealed shocking details regarding the systematic torture and degrading treatment of Armenian prisoners of war and civilian captives held in Azerbaijan.

The report, published two weeks ago by the Office of the Human Rights Defender of Armenia and the Yerevan-based International and Comparative Law Centre (ICLaw) with the support of the Armenian Legal Centre for Justice and Human Rights (ALC) in Washington, D.C., compiles evidence gathered through interviews with 40 repatriated POWs and 10 civilian captives and analysis of video recordings.

All 50 survivors testified to physical torture and abuse and deprivation of adequate food, water, sleep and medical attention, with no distinction between the treatment of detained combatants and civilians by Azerbaijani officials and military personnel.

“With the publication of this report, ALC, in collaboration with the Human Rights Defender and ICLaw, seeks to methodically present the inhumane treatment of Armenian POWs to highlight Azerbaijan’s continued violation of international human rights law and the state-administered policy of dehumanizing Armenian lives,” said Kenneth V. Hachikian, chair of the ALC.

According to the report, Armenian captives were transported between military police confinements, the State Security Service and a pre-trial detention facility in the settlement of Kurdakhany in Baku, in violation of Geneva Convention III mandating that the captor country transfer POWs to a permanent prisoner camp as soon as possible. Armenian captives were regularly subjected to physical torture at each of these locations. Azerbaijani prison guards deployed belts, screwdrivers, gun butts, metal chains and batons to beat the captives, sometimes multiple times a day. One repatriated POW testified that three guards entered his cell every five minutes to beat him to the point of incapacitation.

“Azerbaijani guards entered our cells and demanded us to shout ‘Karabagh is Azerbaijan!’ Whether we were compliant or not, we were subjected to brutal beatings, both in Military Police and in the State Security. There were other captives with me in the cell; three of them were tortured during interrogations using electroshock.”

Under the Geneva Convention III, the captor country must refrain from subjecting POWs to violence, physical harm, reprisal, in-

timidation or discrimination.

Armenian POWs were not supplied with sufficient food and water, the provision of which was often accompanied by torture. Several POWs testified that prison guards would throw away whatever food they could not eat within 10 seconds. Another testified that guards forced him to eat food off the ground. One POW received a severe rash due to the poor quality of drinking water.

“I was kept alone for the last four months. It was torturous. They would give us food and drinks in a way that when they poured it, most of it would spill, and I had to get the leftovers. They broke the cigarettes, then gave them to us. As soon as they opened the cell door, I had to stand up and say ‘Karabagh is Azerbaijan.’ Besides that, they would repeat [Azerbaijani President Ilham] Aliyev’s statement about Artsakh is Azerbaijani and would try to make us repeat whatever they were saying.”

POWs were also intentionally deprived of sleep. Some were handcuffed to radiators or heating rods while others were forced to remain standing or sitting for days at a time. In the winter, prison guards poured buckets of freezing water on captives and opened the windows at night time, forcing captives to sleep on the cold prison floor.

“In their military police area, we were connected to the heating radiators. We slept on the floor for the first few days. We did not get food or water for a few days. I asked them for water, and they splashed cold water on me from a bucket. All my clothes got wet, and they opened the window and made me lie down on the floor so that I would freeze in the cold. They beat us again. I lost consciousness two times. We became psychologically affected there, because they were beating [redacted] in the cell right next to me and we could hear his torture.”

Prison guards consistently refused to provide POWs with medical treatment for injuries inflicted in combat or captivity. As a consequence, many POWs developed infections or more severe injuries. One POW who was sent to a hospital was deprived of food for 10 days. Azerbaijani soldiers lay next to him in his hospital bed while spitting on him and filming their actions.

Under Geneva Convention III, the captor country must provide POWs with sufficient food, water, clothing and medical attention when necessary.

Continued on page E2

Erdogan says Pashinyan offered to meet, and immediately sets preconditions

YEREVAN (Azatutyun.am)—Turkey’s President Recep Tayyip Erdogan said on September 12 that Armenian Prime Minister Nikol Pashinyan has offered to meet with him for talks on improving Turkish-Armenian relations.

Erdogan appeared to make such talks conditional on Armenia agreeing to open a transport corridor that would connect Azerbaijan to its Nakhichevan exclave.

“It is bewildering that on the one hand Pashinyan is saying that the Armenian side is not discussing that [corridor] issue and on the other expressing a desire to meet with me,” he said. “If he wants to meet with Tayyip Erdogan then clear steps will have to be taken.”

Erdogan said that the offer was communicated to him by Georgian Prime Minister Irakli Gharibashvili. The latter met with Pashinyan in Tbilisi on September 8.

Pashinyan did not explicitly deny making such an offer when he reacted to Erdogan’s

remarks through his spokeswoman, Mane Gevorgyan.

“As of now, there have been no contacts between Armenian and Turkish officials, even though the Armenian government is prepared for such contacts,” Gevorgyan told the Armenpress news agency. “In the event of such productive work, Armenia will also be ready for meetings at a high and the highest level.”

Gevorgyan also criticized Erdogan’s calls for the “Nakhichevan corridor,” saying that such statements run counter to efforts to establish “peace and stability and overcome the atmosphere of enmity in the region.” She said that Armenia stands for the opening of all regional transport links.

Pashinyan spoke on August 27 of “some positive signals” sent by the Turkish government to Yerevan and said his administration is ready to reciprocate them.

Erdogan responded by saying that Ankara is open to normalizing Turkish-Armenian relations. But he cited in that

context Azerbaijan’s demands for a formal Armenian recognition of Azerbaijani sovereignty over Nagorno-Karabagh.

Pashinyan described Erdogan’s statements as encouraging and reiterated his readiness to embark on a dialogue with Ankara hours before flying to Tbilisi on September 8.

Armenian opposition leaders and some analysts say Ankara continues to link the normalization of Turkish-Armenian relations to a resolution of the Nagorno-Karabagh conflict favourable to Baku. They say the Turks also want Yerevan to stop campaigning for a greater international recognition of the 1915 Armenian genocide in the Ottoman Empire.

Azerbaijani President Ilham Aliyev threatened earlier this year to forcibly open a corridor to Nakhichevan through Armenia’s southeastern Syunik province repeatedly described by him as “historical Azerbaijani lands.” Yerevan strongly condemned the threat.

(RFE/RL)

TUMO announces \$50 million “TUMO Armenia” campaign

YEREVAN—Marking TUMO’s 10 year anniversary and the inauguration of the new TUMO Gyumri building on September 18, the TUMO Centre for Creative Technologies today announced a five year, \$50 million initiative to make its leading edge educational program available to all teenagers throughout Armenia and Artsakh. With 110 satellite facilities called TUMO Boxes connected to 16 fully equipped TUMO Hubs in regional centers, the program will serve 80 thousand students and reach all young Armenians even in the most remote villages.

A \$10 million seed fund donated by the Yemenidjian family will launch and support hubs in Vanadzor, Kapan and Koghb, along with TUMO Boxes that feed into these and three existing hubs. To raise the remaining \$40 million, TUMO is kicking off an international fundraising campaign. The Armenian General Benevolent Union and Elie & Elzbieta Akilian have each pledged to match up to \$10 million of funds raised in the first 2 years of the campaign. With \$10 million in seed funding, a \$20 million fundraising goal, and an additional \$20 million in matching contributions, the deployment initiative is already underway.

The announcement was made during the anniversary celebration of the official opening of the new TUMO center in Gyumri in the presence of government representatives, partners and friends. TUMO founders Sam and Sylva Simonian joined via live video and gave opening remarks.

“Our vision has always been to empower all young Armenians to achieve their full potential,” said Sam Simonian. “And now we are setting out to fulfill that vision throughout Armenia and Artsakh.”

Also attending were Armen Yemenidjian, representing the Yemenidjian family, Vasken Yacoubian and Vera Setrakian on behalf of AGBU, Elie Akilian, on behalf of Elie & Elzbieta Akilian, via video feed, and TUMO CEO Marie Lou Papazian.

TUMO Centre for Creative Technologies is a free-of-charge education platform that puts teenagers in charge of their own learning. The TUMO program is made up of self-learning activities, workshops and project labs that cover a wide range of focus areas at the intersection of technology and design, including computer programming, animation, game development, music, robotics, 3D modeling, writing, filmmaking, graphic design and more. Over 20 thousand students currently attend TUMO centres in Armenia on a regular basis. In recent years, TUMO centres have also opened in Paris, Moscow, Tirana, Berlin and Beirut, with additional centres expected to open in Lyon, Los Angeles, Lisbon, Milan, Tashkent and Seoul. Licensing revenues from international locations contribute to the long term sustainability of TUMO in Armenia and Artsakh.

(tumo.org)

POWs...

continued from page E1

The report exposes that Azerbaijani prison guards extract forced confessions from POWs through coercion and threats of torture. Several prisoners were forced to sign statements written in the Azerbaijani language, without the presence of a translator or lawyer. One repatriated POW, who was sentenced to four months imprisonment, testified that he was forced to sign several unknown documents under threats of violence. While he was provided with counsel at a legal hearing, the proceedings were conducted in the Azerbaijani language.

More than five dozen Armenian POWs are standing trial or have been convicted in the Baku Grave Crimes Court on charges of terrorism, illegal acquisition and possession of weapons and explosives, formation of illegal armed units and illegal crossing of the state border. The Human Rights Defender, ICLaw and the ALC have denounced these trials as a sham, as the rights of POWs are wholly deprived.

Several POWs testified that soldiers who had additionally served during the Four-Day War in April 2016 or the First Artsakh War were treated with exceptional brutality. One POW, who was beaten so severely that he could not walk for 21 days, was told by the perpetrators that he was being punished for his role in the Armenian Armed Forces.

While captured civilians are protected persons under international law, prison guards did not differentiate between their treatment of civilians and soldiers, comparably sub-

jecting each group to physical abuse and denial of food, water, sleep and medical attention. One civilian was held in solitary confinement with no access to food or water for 12 hours and beaten if he refused to sing the Azerbaijani national anthem.

Under the Geneva Convention, it is impermissible to submit protected persons to violence or threats or to willfully cause serious injury to their body or health. An individual ceases their status of a protected person if the captor country verifies that the individual engaged in activities hostile to the security of the state. However, Armenian civilian captives were never presented with any formal charges that would prove their involvement in military action.

The International Committee of the Red Cross (ICRC) periodically visited the POWs and civilian captives. According to eyewitness testimony, captives were moved to different holding cells during these visits in order to conceal their living conditions.

“Before [ICRC] visits, the guards told us we were not allowed to disclose the degrading treatment and we would have to lie and tell the Red Cross we were being treated well. The Red Cross visited me for the first time on February 1. They handcuffed us. The [ICRC] gave us cigarettes and sweets, and the Azeris confiscated the cigarettes and took out the filters and started giving us one or two a day.”

The report also exposes the brutal treatment and murder of

Armenian soldiers captured in Kovsakan on October 21, 2020 during the 44-day war. The day after the city was seized by Azeri forces, 61 Armenian service members were deployed to Kovsakan and subsequently ambushed. While 15 soldiers were killed during the ambush by the Azerbaijani military, 20 soldiers escaped, and at least 20 others were captured and subsequently murdered, as verified by analysis of video evidence. The video evidence depicts the corpses of Armenian soldiers, sometimes mutilated, that have been dragged by vehicles along dusty roads. Five of the captured soldiers have been repatriated, whereas the remainder are yet to be accounted for.

ICLaw, in collaboration with the ALC, has submitted requests for interim measures, or urgent measures to protect individuals at imminent risk of irreparable harm, to the European Court of Human Rights on behalf of 123 Armenian captives, 111 of which have been granted. To date a total of 104 POWs and civilian captives have been repatriated to Armenia. While Azerbaijan only acknowledges the continued detention of 45 individuals, an estimated 200 POWs and other captives remain in Azerbaijan.

“Azerbaijan’s continued systematic and intentional torture of Armenians in captivity can no longer be ignored or treated with kid-gloves,” said Hachikian. “The international community and human rights organizations must pressure dictator Aliyev to release all Armenian POWs immediately.”

(The Armenian Weekly)

«ԲԱՍՏՐՄԱՃԵԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»-ի ԿՐԹԱԹՈՇԱԿ

PASDERMAJIAN FOUNDATION SCHOLARSHIP FONDATION PASDERMAJIAN BOURSE D’ÉTUDES

«Բաստրմաճեան Հիմնադրամ»-ի 2021-2022 ուսումնական տարեշրջանի
համալսարանական կրթաթոշակի դիմումագրերը
պիտի ընդունուին մինչեւ՝ 1 Նոյեմբեր 2021

Թեկնածուն պարտի ըլլալ՝

- Համալսարանական ուսանող՝ Պսակաւոր, Մագիստրոս կամ Դոկտորական աստիճանի:
- Յաջող իր ուսումնական արդիւնքներուն մէջ եւ գործունեայ տեղական եւ ի մասնաւորի հայկական կազմակերպութիւններէ եւ միութիւններէ ներս:
- Շրջանաւարտ՝ Մեծն Մոնթրէալի մէջ գործող հայկական երկրորդական վարժարանէ մը: Եթէ վարժարանը այդ ուսումնական տարեշրջանի ընթացքին երկրորդական 5րդ կարգ չունի, ուրեմն տուեալ վարժարանի բարձրագոյն կարգի աշակերտները՝ շրջանաւարտ կը նկատուին:

Բարեհաճեցէ՛ք 2021-2022 տարեշրջանի դիմումագրերը պատուիրել կապուելով
հետեւեալ ե-նամակի հասցէին՝ pasdermajian.scholarship@gmail.com

Նկատի պիտի առնուին միայն լրիւ ամբողջացած եւ ե-նամակով ուղարկուած
դիմումագրերը, պահանջուած փաստաթուղթերով :







Ghadir

Meat & Restaurant

Մեր ճաշարանին ներս կը ապաստարկուին միջին արևելյան զանազան ճաշատեսակներ, օրինակ՝ մկնկիշ, պանիրով պղտրկ, հաւու եւ կովու միսով շատրվա, հաւու եւ կովու միսով խորոված, մսաշոր, չի բօթթւ, յման հաւու խորոված, սուճուխ եւ այլ տեսակի աղանդերներ:

Մեր յարգարժան յաճախորդներուն կը յայտնենք, որ մօտ ատենէն բացումը պիտի կատարենք մեր նոր մասնաճիւղին, **հետեւեալ հասցէով՝**
London, Ontario @ 769 Southdale Road East
(519) 668-1800

ՀԱՍՏԷ՝

1848 Lawrence Avenue East

Scarborough, Ontario M1R 2Y4

ՀԵՌԱԶԱՅՆ՝

(416) 750-7404 կամ (416) 750-7400



Fresh, fried and charcoal
grilled fish – Dine in or Take out

COME HEAR WHAT YOU HAVE BEEN MISSING



TRY HEARING AIDS
RISK-FREE

Call 416 754-4327

2 LOCATIONS

702 Coxwell Avenue
#704, Toronto, ON M4C 3B9
Tel: 416 463-4327(HEAR)

Parkway Mall, 85 Ellesmere Road,
#29 Toronto, ON, M1R 4B9
Tel: 416 754-4327(HEAR)

www.hearingaidsource.ca



- Free Hearing Tests
- No obligation Hearing Aid Trial
- Hearing Protection

Images copyright Oticon Canada Ltd.



hearing aid source

invisible, custom & comfortable



**Pharmacie
Levon Benohanian et
Mher Koubelian Inc.**

Pharmaciens-propriétaires

3915, Boulevard Samson
Laval, QC H7W 2G1



T 450 688-4111

F 450 681-5525

proximlaval@gmail.com

Lun. au vend. : 8h30 à 21h

Sam. et dim. : 9h à 17h

Infirmière (jeudi) : 8h30 à 15h



Անվճար սպասարկություն մինչև ձեր տունը.
Շաբաթական դեղատուփիկի պատրաստություն.
Ազատ փոխադրում ձեր դեղացանկի (dossier)
այլ դեղարան. Դեղերու պատուաստում
